ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2025թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թանգարանների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և հիմք ընդունելով մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 3-ի N 2 եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող Գրիգոր Աղասյանի «Նոր տարվա նախօրեին» կտավը /1988թ., կտավ, յուղաներկ, 100 x 122/ 2025 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2026 թվականի մայիսի 5-ը «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
___ _____ 2025 թ.
հ. _____ -Ա որոշման

«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին ժամանակավոր պահպանության հանձնվող թանգարանային առարկաների

ՑԱՆԿ

№	Հաշվառման նիշը	Հեղինակը	Անվանումը	Ստեղծման վայրը	Ստեղծման թիվը	Նյութը	Չափսը սմ-ով	Լուսանկարը
1.	Ժպ-547	Գրիգոր Աղասյան	«Նոր տարվա նախօրեին»	Երևան	1988	կտավ, յուղաներկ	100 x 122	

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով՝

2026 թվականին լրանում է անվանի արվեստագետ Գրիգոր Աղասյանի ծննդյան 100-ամյակը: Հոբելյանական միջոցառումների շրջանակներում Հայաստանի ազգային պատկերասրահում կազկակերպվելու է «Գրիգոր Աղասյան. 100» խորագիրը կրող ցուցահանդեսը: Ցուցահանդեսին ներկայացվելու են նկարչի աշխատանքներ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի, «Ստեփան Շահումյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի, «Վանաձորի կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի, ընտանիքի և մասնավոր հավաքածուներից:

Նախագծով առաջարկվում է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին պայմանագրի հիման վրա 2025 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2026 թվականի մայիսի 5-ը ժամանակավոր պահպանության հանձնել «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուում ներառված Գրիգոր Աղասյանի «Նոր տարվա նախօրեին» կտավը /1988 թ., կտավ, յուղաներկ, 100 x 122/:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ